

ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 8.9.2006

COM (2006) 481 վերջնական

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵԿՈՒՅՑԸ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

**Կրթության և ուսուցման եվրոպական համակարգերի արդյունավետություն ու
անաչառություն**

{SEC(2006) 1096}

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

**Կրթության և ուսուցման եվրոպական համակարգերի արդյունավետություն ու
անաչառություն**

1. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2006թ. Եվրոպական Գարնանային Խորհուրդը¹ կարևորեց այն գույգ մարտահրավերները, որոնք ունեն Եվրոպայի կրթության ու ուսուցման համակարգերը և հանգեց այն եզրակացության, որ դրանք ծայրահեղ կարևոր գործոններ են՝ զարգացնելու ԵՄ ներուժը մրցունակության, ինչպես նաև սոցիալական կապակցվածության համար: Առաջինն ընդգծում էր նաև այն փաստը, որ բարեփոխումները պետք է մեծացվեն՝ ապահովելու կրթության և ուսուցման բարձրորակ համակարգեր, որոնք կլինեն և՛ արդյունավետ, և՛ անաչառ: Այս հիմնախնդիրները զբաղեցնում են կենտրոնական տեղ Աճի և Աշխատանքների համար Լիսաբոնի Գործընկերության և Սոցիալական ներգրավման ու Սոցիալական Ապահովության Համակարգման Բաց Մեթոդի ԵՄ նպատակների իրականացման գործում:
2. Եվրոպայում՝ պետական բյուջեի սահմանափակումների և գլոբալիզացման, ազգագրական փոփոխության և տեխնոլոգիական նորարարության համատեքստում, շեշտը հատուկ դրվում է կրթության և ուսուցման հատվածի արդյունավետության կատարելագործման վրա: Իհարկե, սա ցանկալի է, սակայն հաճախ ընդունված է ասել, որ արդյունավետության և անաչառության նպատակներն երկուստեք բացառիկ են: Շատ հաճախ են հանդիպում այն դեպքերը, որ կրթության և ուսուցման առկա համակարգերը վերարտադրում կամ նույնիսկ վատթարացնում են ներկայիս անհավասարությունները:
3. Մակայն փաստերը ցույց են տալիս, որ, դիտարկվելով ավելի լայն հեռանկարում, անաչառությունը² և արդյունավետությունն³ իրականում համալրում են միմյանց, և այս

¹ Եվրոպական Խորհուրդ, 2006թ. մարտի 23-24, Նախագահության Եզրակացություններ, պարագրաֆ 23

² Անաչառությունը դիտարկվում է որպես մի աստիճան, որով անհատները կարող են օգտվել կրթությունից և ուսուցումից մուտքի հնարավորության, վարվեցողության և արդյունքների առումով: Անաչառ համակարգերն երաշխավորում են, որ կրթության և ուսուցման արդյունքներն անկախ են սոցիալ-տնտեսական և այլ գործոններից, որոնք մղում են դեպի կրթական անշահավետ իրադրություն: Դրանք նաև երաշխավորում են, որ վարվեցողությունն

գեկույցը կենտրոնանում է հենց այդ քաղաքականությունների վրա: Այն նպատակ ունի անդամ այլ երկրների միտումների մասին տեղեկացնել քաղաքականություն մշակողներին, օժանդակել ԵՄ մակարդակով հասանելի հետազոտությանը և օգնել նրանց որոշումներ կայացնել համակարգի բարեփոխման շարունակական գործընթացում: Անձնակազմի Աշխատանքային Փաստաթուղթը⁴ մանրամասնորեն նկարագրում է հիմքում ընկած փաստերը:

Տնտեսական և սոցիալական մարտահրավերներ

4. ԵՄ ներկայումս ունի չորս փոխկապակցված սոցիալ-տնտեսական մարտահրավեր՝ գլոբալիզացիա և նոր արդյունաբերություն ու բարձր մրցունակություն ունեցող երկրների առկայություն, ազգագրություն Եվրոպայի ծերացող բնակչության և վերաբնակիչների հոսքի տեսքով, արագ փոփոխություն աշխատաշուկայի բնույթի մեջ, ինչպես նաև տեխնոլոգիայով դեկավարվող SZS /ICT/ հեղափոխություն: Թվարկվածներից յուրաքանչյուրը բոլորի համար լավ կրթություն ապահովելու մարտահրավերի վրա իր ազդեցությունն ունի: Որակավորումների ցածր աստիճան ունեցող անձինք իրենցից ներկայացնում են գործազրկության և սոցիալական մերժման աճող ռիսկ: 2004թ. ԵՄ քաղաքացիների 75 միլիոնն ուներ հմտությունների ցածր մակարդակ /աշխատուժի 32%-ը/, սակայն մինչև 2010թ. նոր աշխատանքների 15%-ը կլինի միայն հիմնական հանրակրթությամբ անձանց համար⁵:
5. Կրթության և ուսուցման քաղաքականությունները կարող են ունենալ էական դրական ազդեցություն տնտեսական և սոցիալական արդյունքների վրա՝ ներառյալ շարունակական զարգացումն ու սոցիալական համախմբվածությունը, սակայն կրթության և ուսուցման ոլորտում անհավասարությունները նույնպես քողարկում են հսկայական ծախսեր, որոնք հազվադեպ են երևում հաշվապահական հասարակական համակարգերում: ԱՄՆ-ում ողջ կյանքի ընթացքում յուրաքանչյուր 18տ. երիտասարդի վրա /ավագ դպրոցը չավարտած/ ծախսվող միջին ընդհանուր գումարը գնահատվում է 450,000 ԱՄՆ դոլար /350,000 եվրո/: Սա իր մեջ ներառում է եկամտահարկի կորուստը, առողջապահության ու հասարակական

արտահայտում է անհատի ուսումնառության հատուկ կարիքները: Սեռային, ազգային փոքրամասնության կարգավիճակի, անընդունակության և տարածաշրջանային անհամապատասխանությունների հետ կապված անիրավահավասարությունը չի համարվում գլխավոր գերակայություն, բայց ուղղակիորեն կապված է անաչառության հետ, քանի դեռ այն նպաստում է սոցիալ-տնտեսական համընդհանուր անշահավետ իրավիճակին:

³ Արդյունավետությունը ներառում է գործընթացի մուտքի և ելքի տվյալների միջև հարաբերությունը: Համակարգերը համարվում են արդյունավետ, եթե մուտքի տվյալներն առաջացնում են առավելագույն ելքի տվյալներ: Կրթական համակարգերի հարաբերական արդյունավետությունը սովորաբար որոշվում է թեստերի և քննության արդյունքների միջոցով, մինչդեռ դրանց՝ ավելի լայն հասարակության և տնտեսության հետ կապված արդյունավետությունն որոշվում է շահույթի մասնավոր և սոցիալական չափաքանակով:

⁴ Անձնակազմի Աշխատանքային Փաստաթուղթ (ԱՄՓ) (SEC (2006) 1096)

⁵ ԱՄՓ, էջ 5


օժանդակության մեծացված պահանջը և հանցագործության ու օրինախախտության բարձր ցուցանիշների ծախսերը⁶: Եթե ՄԹ-ում աշխատող բնակչության 1% ավելին ունենար գոնե A մակարդակի, այլ ոչ թե ընդհանրապես ոչ մի որակավորում, ապա ՄԹ շահույթը կլիներ տարեկան մոտ :665 միլիոն հանցագործության կրճատված ցուցանիշի և վաստակելու մեծացած ներուժի միջոցով⁷:

6. Քաղաքականությունները, որոնք կրճատում են այսպիսի ծախսերը, կարող են առաջացնել և՛ անաչառության, և՛ արդյունավետության շահույթներ: Անդամ պետությունները կարող են առավելագույնս մեծացնել իրական և երկարաժամկետ եկամուտներն իրենց կրթության և ուսուցման համակարգերից՝ հաշվի առնելով անաչառությունն ու արդյունավետությունը համակարգի բարեփոխումների վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

2. ՑԿՅԱՆՍ ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՉԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

7. Կրթության և ուսուցման ոլորտում ներդրումները ժամանակ են պահանջում արդյունք ցույց տալու համար, ուստի, իշխանությունները գերակայությունները բաշխելիս պետք է ի նկատի ունենան երկարաժամկետ նախագծում տեղական և ազգային մակարդակներում: Ինչպես ցույց է տալիս հաջորդ հատվածը, ցկյանս ուսումնառության գործընթացի եկամտի ամենաբարձր ցուցանիշներն ունի նախադպրոցական կրթությունը /հատկապես ամենաանընդունակների համար/, և այս ներդրումների արդյունքներն աճում են ժամանակի ընթացքում:

Փժանկար 1: Ներդրումների շահույթները ցկյանս ուսումնառության տարբեր մակարդակներում





Աղբյուր: Cunha et al (2006) աղապատագված ԿԷԵՓՑ /EENEE/⁸ կողմից

8. Երկարաժամկետ ներդրումների նախագծման կարիքն ընդգծում է Ցկյանս Ուսումնառության Ազգային Ռազմավարությունների կարևորությունը, որն անդամ պետությունները համաձայնել են ընդունել 2006թ. վերջին: Որակավորումների ազգային և Եվրոպական շրջանակները կհեշտացնեն ուսումնառության վավերացումը բոլոր համատեքստերում: Դրանք կարևոր են՝ խթանելու անաչառությունը, քանի որ նվազագույն ընդունակություններով անձինք ձեռք են բերում առանցքային կարողություններ և հմտություններ⁹ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունում: Ուսումնառության ուղիներում փակուղիները հեռացնելու նպատակով ուսումնառության ամբողջ գործընթացի վավերացման և շարժուն լինելու երաշխավորումը և՛ արդյունավետության, և՛ անաչառության հաղթակետն է¹⁰:
9. Կրթության և ուսուցման համակարգերում գնահատման կուլտուրայի կարիք է զգացվում: Արդյունավետ երկարաժամկետ քաղաքականությունները պետք է հիմնված լինեն կատարյալ փաստերի վրա: Որպեսզի անդամ պետությունները լիարժեքորեն մշտադիտարկեն և հասկանան, թե ինչ է կատարվում իրենց համակարգերում. նրանք համապատասխան հետազոտություն անցկացնելու և գնահատելու, անհրաժեշտ տվյալները հավաքագրելու հնարավորություն ունեցող վիճակագրական ենթակառուցվածքի, ինչպես նաև քաղաքականությունների իրագործման առաջընթացը գնահատելու մեխանիզմների կարիք ունեն:
10. Կրթության քաղաքականությունները միայնակ չեն կարող արձագանքել կրթության մեջ առկա թերություններին: Այստեղ գործում է անհատական, սոցիալական, մշակութային և տնտեսական գործոնների փոխազդեցությունը, որոնք միավորվում են՝ սահմանափակելու կրթության հնարավորությունները: Խաչաձև ճյուղային մոտեցումները կարևոր են՝ միմյանց կապակցելու կրթության և ուսուցման այն քաղաքականությունները, որոնք վերաբերում են

⁸ Կրթության Էկոնոմիկայի Եվրոպական Փորձագիտական Ցանց /ԿԷԵՓՑ, EENEE/. www.education-economics.org

⁹ COM (2005)548, 2005/0221 (COD), «Ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ Խորհրդի և Եվրոպական Կառավարության Առաջարկը»

¹⁰ ԱԱՓ, էջ 15-16

զբաղվածությանը, տնտեսությանը, սոցիալական ներգրավմանը, երիտասարդությանը, առողջապահությանը, արդարադատությանը, բնակարանային և սոցիալական ծառայություններին: Այսպիսի քաղաքականությունները ևս պետք է նախագծվեն՝ կարգավորելու կրթության և ուսուցման ոլորտում տարածաշրջանային անհավասարությունները:

Անդամ պետությունները պետք է մշակեն գնահատման կուլտուրա, ինչպես նաև քաղաքականություններ ցկյանս ուսումնառության ամբողջ գործընթացի համար, որոնք խորապես հաշվի կառնեն արդյունավետությունն ու անաչառությունը կապակցված և երկարաժամկետ եղանակով, և որոնք կհամալրեն քաղաքականությունները վերջիններիս վերաբերող ոլորտներում:

3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

3.1 Նախադպրոցական կրթություն. կենտրոնացում ուսումնառության վաղ հասակից

11. Ապացույցների էական մասն այն է, որ մասնակցությունը բարձրորակ նախադպրոցական կրթությանը բազմիցս ունեցել է առավելություններ անհատի հանրակրթության և կարիերայի ընթացքում ձեռքբերումների և սոցիալիզացման առումով, քանի որ այն հեշտացնում է հետագա ուսումնառությունը¹¹:
12. Եվրոպայի և ԱՄՆ-ի փորձերը ցույց են տալիս, որ վաղ միջանկյալ ծրագրերը, հատկապես նրանք, որոնց նշանակետն անընդունակ երեխաներն են, կարող են ստեղծել լայն դրական սոցիալ-տնտեսական շահույթներ, և դրանք լավ են պահպանվում մեծահասակների շրջանում¹²: Արդյունքները ներառում են հանրակրթության ավելի լավ ձեռքբերումներ, գնահատականի պահպանում, զբաղվածության ցուցանիշներ, աշխատավարձեր, հանցագործության կանխում, ընտանեկան հարաբերություններ և առողջապահություն: Այնուամենայնիվ, կրթության համակարգում թերությունները փոխհատուցելու համար նախադպրոցական ծրագրերը պետք է հավելել հետագա միջանկյալ այնպիսի ծրագրերով, ինչպիսին է օժանդակումը լեզվի ուսուցմանը և սոցիալական կարգավիճակի կարգավորմանը, այլապես նրանց շահավետ արդյունքները շոշափելի չեն լինի: Վաղ ուսումնառությունում ներդրումների պակասը հանգեցնում է լրացուցիչ ծախսերի զգալի բարձր մակարդակների կյանքի ավելի ուշ փուլերում, որը քիչ նախընտրելի է ու

¹¹ ԱԱՓ, էջ 15-16, 18

¹² ԱԱՓ, էջ 18-19

արդյունավետ և կարող է կապված լինել հանցագործության, առողջապահության, գործազրկության և այլ սոցիալական քաղաքականությունների վրա ծախսվող մեծ գումարների հետ:

13. Եվրոպական երկրներից մի քանիսը ներմուծել են ծախսերի քաղաքականություններ, որոնց նպատակն է ամրապնդել վաղ կրթությունը և վերացնել թերությունները հենց վաղ հասակից /օր՝. Բելգիա, Իսպանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հունգարիա/: Այսպիսի քաղաքականությունները կատարյալ էֆեկտիվ են արդյունավետության ու անաչառության առումով և բարձր գերակայություն են հետապնդում պետական ու մասնավոր ծախսերի բաշխման մեջ:
14. Մանկավարժության և երեխաներին վաղ դաստիարակելու մեթոդները պետք է մանրամասն հաշվի առնվեն: Ուսումնառության, ինչպես նաև անհատական և սոցիալական կարողությունների վրա կենտրոնացող ծրագրերը հավակնում են՝ ունենալու ավելի լավ արդյունքներ, և, հետևաբար, անուղղակի մեծ ազդեցություն ողջ կյանքի ընթացքում¹³: Հատուկ վերապատրաստում անցած նախադպրոցական ուսուցիչների ապահովման գործընթացը պետք է կատարելագործվի շատ երկրներում: Ծնողների ներգրավումը համարվում է էական գործոն նախադպրոցական կրթության հաջողության համար:

Նախադպրոցական կրթությունն ունի ամենամեծ շահույթները ձեռքբերումների և երեխաների սոցիալական հարմարվողականության (ադապտացիա) առումով: Անդամ պետությունները պետք է ավելի շատ ներդրումներ կատարեն նախադպրոցական կրթության մեջ՝ որպես արդյունավետ միջոց՝ հիմք դնելու հետագա ուսումնառության համար, կանխելու դպրոցից դուրս մնալու միտումը, մեծացնելու արդյունքների և համընդհանուր հմտությունների մակարդակների անաչառությունը:

- 3.2. Նախնական և միջնակարգ կրթություն. հիմնական կրթության որակի կատարելագործում բոլորի համար
15. Պարտադիր կրթության և ուսուցման համակարգերը պետք է ապահովեն բոլորից պահանջվող հիմնական կրթություն և առանցքային կարողություններ՝ բարգավաճելու գիտելիքահենք հասարակությունում: Մա հատկապես կարևոր է որոշ անընդունակ խմբերի համար և այնտեղ, որտեղ անդամ պետությունները գործ ունեն վերաբնակիչների մեծ խմբերի և ազգային փոքրամասնությունների հետ: Ուսանողներին վաղ տարիքում օկրթող¹⁴ կրթական

¹³ ԱԱՓ, էջ 18-19

¹⁴ Սա վերաբերում է այն դեպքին, երբ խտրականություն է դրվում առանձին դպրոցներում երեխաների ներգրավման մեջ: Սինչդեռ սա չպետք է անհրաժեշտաբար ներառի բաժանումն ընդհանուր և մասնագիտական կրթությունների: Այս սահմանումն ոչ թե ներառում է

համակարգերը սրում են կրթության ձեռքբերման տարբերությունները սոցիալական կարգավիճակի պատճառով, և, այսպիսով, հանգեցնում են անգամ ավելի անհավասար արդյունքների ուսանողի և կատարողականության միջև¹⁵: Այդ համակարգերն արդյունավետ են եղել անդամ որոշ պետություններում, որտեղ բոլոր դպրոցներն ուսանողների խմբերին գիտելիք են հրամցնում միևնույն կարիքներով և ձեռքբերման մակարդակներով: Այնուամենայնիվ, փաստերը սա դնում են կասկածի տակ: Վաղ տարիքում աշակերտներին կրթող Եվրոպական երկրներն /օր.՝ Գերմանիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Ավստրիա/ ավելի շատ են գրանցում տարբերություններ աշակերտների գիտելիքի ձեռքբերման մեջ, քան ավելի ինտեգրացված հանրակրթական համակարգերով երկրները:

16. Վաղ հասակում կրթելը վատ ազդեցություն ունի հատկապես անընդունակ երեխաների գիտելիքի ձեռքբերման մակարդակների վրա: Եթե վաղ ուսուցումը հետաձգվի մինչև ավագ միջնակարգային մակարդակ /ներառյալ դպրոցների տարբեր տեսակների միջև անցումի հնարավորությունը/, ապա հնարավոր կլինի կրճատել խտրականությունը և խթանել անաչառությունը՝ առանց խոչընդոտելու արդյունավետությանը¹⁶:
17. Անդամ շատ պետություններ /օր.՝ Բելգիա, Նիդեռլանդներ, Չեխիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Հունգարիա, Պորտուգալիա, Սլովակիա, ՄԹ/¹⁷ ձգտում են կատարելագործել արդյունավետությունն ապակենտրոնացման միջոցով՝ առանձին հաստատություններին տալով որոշում կայացնելու ավելի շատ իրավունք դասընթացների բովանդակության սահմանման, բյուջեի բաշխման կամ անհատական որոշումներ կայացնելու գործում: Հիմնավորումը սովորաբար այն է, որ հանգամանքներից ստեղծվող գիտելիքը և առանձնահատուկ կարիքներն ապակենտրոնացած որոշում կայացնելը դարձնում են ավելի արդյունավետ: Հաշվետվության համակարգերն ավարտական կենտրոնացած քննությունների և գնահատման համակարգերի տեսքով գոյություն ունեն Եվրոպական շատ երկրներում /օր.՝ Դանիա, Էստոնիա, Հունաստան, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Կիպրոս, Լատվիա, Լիտվա, Հունգարիա, Մալթա, Նիդեռլանդներ, Ավստրիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովենիա, Ֆինլանդիա, ՄԹ, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Ռումինիա/¹⁸: Կան որոշ միջազգային փաստեր, որ հաստատությունների տեղական ինքնավարության և հաշվետվության կենտրոնացված համակարգերը կարող են կատարելագործել ուսանողի կատարողականությունը: Սակայն հաշվետվության համակարգերը պետք է այնպես

ունակության վրա հիմնված ուսումնական պլանի հարմարեցումն երեխաների տարբեր խմբերին, տարբեր դպրոցներում, այլ միևնույն դպրոցում:

¹⁵ ԱԱՓ, էջ 19-20

¹⁶ ԱԱՓ, էջ 22

¹⁷ ԱԱՓ, էջ 22-23

¹⁸ ԱԱՓ, էջ 23-24

նախագծվեն, որ երաշխավորեն անաչառության լիարժեք գործոնը և խուսափեն ապակենտրոնացած որոշումների տեղական հնարավոր անհավասար հետևանքներից, օր` դպրոցների հիմնախնդիրների վերաբերյալ: Որոշ երկրներ իրենց հաշվետվության համակարգերում ներմուծել են անաչառության նպատակներ և խթաններ` ներառյալ նաև հետագա գործողություններ այն հաստատությունների համար, որոնք չեն համապատասխանում անաչառության պահանջվող ստանդարտներին:

18. Անաչառության և արդյունավետության ամենակարևոր գործոններն են որակը, փորձը, ուսուցիչներն ու նրանց կողմից օգտագործվող մանկավարժության տեսակները: Գործակցելով ծնողների և աշակերտների հետ` ուսուցիչները կարող են ունենալ առանցքային դերակատարություն ամենաանընդունակ երեխաների մասնակցությունն ապահովելու գործում: Սա հատկապես արդյունավետ է, երբ դպրոցներն ունենում են ներգրավման վերաբերյալ ռազմավարություններ, որոնք անընդհատ նորացվում են և հիմնված են մանկավարժական հետազոտության վրա: Անդամ պետությունները մեծ ջանքեր են գործադրել` գտնելու քայլերի այն ճիշտ համադրությունը, որը կխրախուսի փորձառու և մեծ ներուժով ուսուցիչներին աշխատել մարտահրավեր նետող դպրոցներում¹⁹: Անձնակազմի այն քաղաքականությունների զարգացումը, որոնք երաշխավորում են, որ բարձրորակ դասավանդումը հասանելի է անընդունակ աշակերտներին, պետք է համարվի զերակայություն:

Հետազոտության մեծ մասն ենթադրում է, որ կրթության և ուսուցման համակարգերը, որոնք ներգրավում են աշակերտներին վաղ տարիքում, վատթարացնում են սոցիալ-տնտեսական կարգավիճակի ազդեցությունը կրթության ձեռքբերման վրա և չեն մեծացնում արդյունավետությունն երկար ժամանակ: Ե՛վ արդյունավետությունը, և՛ անաչառությունը կարող են կատարելագործվել ուսուցիչների որակի և թերի հատվածներում անձնակազմի համալրման ընթացակարգերի կատարելագործման վրա կենտրոնացման, ինչպես նաև անհավասարությունից խուսափող ինքնուրույնության և հաշվետվության համակարգերի նախագծման միջոցով:

3.3. Բարձրագույն կրթություն. ներդրումների կատարելագործում` միևնույն ժամանակ մեծացնելով մասնակցությունը

19. Բարձրագույն կրթությունը գիտելիքահենք տնտեսության և հասարակության առանցքային հատվածն է: Այն կրթության, նորարարության և հետազոտության □գիտելիքային եռանկյուննու□ հիմքն է կազմում: Ինչպես պարզաբանում է Համալսարանների

¹⁹ ԱԱՓ, էջ 25

Արդիականացման վերաբերյալ Հանձնաժողովի Ձեկույցը²⁰, ԵՄ բարձրագույն կրթության հատվածը կունենա բազմաթիվ մարտահրավերներ և արդիականացման կարիք, եթե ուզում է դառնալ ավելի մրցունակ և խթանել գերազանցությունը: Մարտահրավերներից մեկը բազմազան համակարգերի ստեղծումն է, որը թույլ կտա անաչառ մասնակցություն բոլորին՝ կատարելով իրենց դերն ավելի արդյունավետորեն և միևնույն ժամանակ մնալով ֆինանսապես իրագործելի: Հանձնաժողովն արդեն առաջարկել է, որ ԵՄ պետք է ձգտի տասնամյակի ընթացքում ՀՆԱ առնվազն 2%-ը հատկացնել արդիականացված բարձրագույն կրթության հատվածի բոլոր գործընթացներին²¹՝ կառուցելու գիտելիքահենք հասարակություն:

20. Կայուն աճ է գրանցվել ուսանողների թվաքանակի և Եվրոպական համալսարաններից ունեցած ակնկալիքների ընդլայնման մեջ, սակայն ֆինանսավորման մակարդակները համապատասխանաբար չեն աճել: Միևնույն ժամանակ, ուսանողների թվաքանակի մեծացումը չի բարձրացրել անաչառության մակարդակը, քանի որ այն մեծամասամբ նպաստել է սոցիալ-տնտեսական բարձր խավերի անհատներին կամ նրանց, ում ծնողները մասնակցել են բարձրագույն կրթությանը²²:
21. Ընդհանուր ենթադրություն կա, որ բարձրագույն կրթության օանվճարօ համակարգը (պետական պատվեր), իր հերթին, անաչառ է: Իրականում այս ենթադրությունը չի բխել իրականությունից, քանի դեռ մասնակցությունը սահմանող հիմնական գործոնը սոցիալ-տնտեսական կարգավիճակն է: Փաստերի մեծ մասը ցույց է տալիս, որ սովորաբար առկա են մասնավոր էական շահույթներ այն մարդկանցից, ովքեր մասնակցում են բարձրագույն կրթությանը, և այդ շահույթներն ամբողջովին չեն փոխհատուցվում աստիճանաբար զարգացող հարկային համակարգերի կողմից: Սա կարող է ունենալ հակառակ վերաբաշխման հետևանք: Տվյալ հետադիմական հետևանքը հատկապես լուրջ է դառնում, երբ հանրակրթական համակարգերը սրում են սոցիալ-տնտեսական կարգավիճակի հետևանքները կրթության ձեռքբերման վրա: Անհատների ու հասարակության կողմից ֆինանսավորված գումարների և յուրաքանչյուրի ստացած շահույթի միջև ավելի անաչառ հավասարություն ստեղծելու²³, ինչպես նաև համալսարաններին անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսավորմամբ ապահովմանը նպաստելու համար շատ երկրներ ուղղվում են դեպի բարձրագույն կրթության գլխավոր անմիջական հետնորդները՝ ուսանողները՝ ներդնելու իրենց սեփական ապագայի համար՝ վճարելով ուսման վարձերը /օր՝. Բելգիա, Իսպանիա,

²⁰ COM (2006) 208 վերջնական

²¹ COM (2006) 208 վերջնական: Տե՛ս նաև COM (2006) 30 և COM (2005) 152

²² ԱԱՓ, էջ 25-26

²³ Բարձրագույն կրթությունից շահույթի մասնավոր միջին ցուցանիշը կազմում է մոտ 9% ԵԱԱՀ երկրներում:

Իռլանդիա, Նիդեռլանդներ, Ավստրիա, Պորտուգալիա, ՄԹ, Լիխտենշտեյն/²⁴: Փաստերը նաև վկայում են, որ ուսման վարձերի շուկայական արդյունքները կարող են կատարելագործել դասավանդման ու կառավարման որակը համալսարաններում և խթան հանդիսանան ուսանողների համար²⁵:

22. Պարզ է, որ ուսման վարձերի բարձրացումը, չհամատեղելով ֆինանսական աջակցությունն անապահով ուսանողներին, բարձրագույն կրթություն մուտք գործելու անաչառությունը վատթարացնելու վտանգ է ներկայացնում: Ամենաանապահովները հաճախ վտանգի և պարտքի առավել հակում ունեցողներն են, և հավանական է, որ նրանք ավելի շատ խույս կտան ուսման վրա ժամանակ վատնելուց, քան գումար վաստակելուց, հետևապես, ավարտելուց հետո մասնավոր շահույթները չեն կարող ապահովված լինել: Սա հատկապես իրական է, երբ ուսման վարձերի մակարդակը հիմնված է շահույթի գնահատված ցուցանիշների վրա այն ակնկալվող ենթադրությամբ, որ ստեղծությունը կշարունակի վարձատրել շրջանավարտներին այն նույն մակարդակով, ինչպես այժմ: Տալով բանկային վարկեր և առաջարկելով թոշակներ ու նպաստներ՝ իշխանությունները կարող են խրախուսել ավելի անապահով ուսանողների մուտքի հնարավորությունը: Այսպիսի մեխանիզմներ արդեն ներմուծվել են Եվրոպական որոշ երկրներում (օր՝ Բելգիա, Իսպանիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Նիդեռլանդներ, Ավստրիա, Պորտուգալիա, ՄԹ, Լիխտենշտեյն): Մեխանիզմների արդյունքներն ուսումնասիրելու համար դեռ չափազանց վաղ է, սակայն Ավստրալիայի և ԱՄՆ-ի փաստերը ցույց են տալիս, որ ֆինանսավորման թիրախային աջակցության կողմից համալրվող ուսման վարձերը մեծացնում են ուսանողների թվաքանակը՝ բացասապես չանդրադառնալով անաչառության վրա²⁶:

23. Որպես կրթության վաղ պարբերաշրջանում անաչառությունների արդյունք՝ անապահով կարգավիճակ ունեցող աշակերտները հաճախ չեն ստանում բարձրագույն կրթություն մուտք գործելու համար պահանջվող որակավորումների մակարդակը: Նույնիսկ նրանք, ովքեր ստանում են, հաճախ տրամադրված չեն ընդունվել համալսարան²⁷: Հանրակրթական համակարգերի արդյունավետությունն ու անաչառությունը մեծացնելու քաղաքականություններն իրենցից ներկայացնում են կենսական անհրաժեշտություն բարձրագույն կրթության մշակութային ընկալումը փոխելուն ուղղված գործողության հետ մեկտեղ: Ամփոփելով սա՝ պետք է նշել, որ բարձրագույն կրթության հնարավորությունների և առավելությունների մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի աշակերտներին դպրոցներ այցելելու, դաստիարակչական ծրագրերի ու ցկյանս ուղղորդման միջոցով, և, որ

²⁴ ԱԱՓ, էջ 27-29

²⁵ ԱԱՓ, էջ 28

²⁶ ԱԱՓ, էջ 29

²⁷ ԱԱՓ, էջ 28

ամենակարևորն է, ընտանիքներում, երբ երեխաները դեռ տակավին երիտասարդ են²⁸: Համալսարաններին պետք է խրախուսել՝ մշակելու համապարփակ, սոցիալական ապահովման և մուտքի հնարավորության քաղաքականություններ, որոնք կկարողանան ներմուծել թերությունները հարթող և գումար հատկացնող ծրագրեր:

Բարձրագույն կրթություն անվճար մուտք գործելն անպայմանորեն չի երաշխավորում անաչառություն...Ե՛վ արդյունավետությունը, և՛ անաչառությունն ամրապնդելու համար անդամ պետությունները պետք է ստեղծեն համապատասխան պայմաններ և խթաններ՝ առավել մեծացնելու ներդրումները պետական և մասնավոր աղբյուրներից՝ ներառյալ, եթե անհրաժեշտ է, ուսման վարձերը՝ անապահովներին տրամադրելով ֆինանսական միջոցներ: Հանրակրթության մակարդակում առանձնահատուկ գործողություններ ևս պետք է ձեռնարկվեն: Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է առաջարկեն կրթության ապահովման ավելի զանազան տեսակներ և խթաններ՝ աստիճանաբար բավարարելու միմյանցից խիստ տարբեր սոցիալական և տնտեսական կարիքները:

3.4. Մասնագիտական կրթություն և ուսուցում. որակի և համապատասխանության կատարելագործում

24. Բնակչության ծերացման պատճառով ԵՄ երիտասարդների գործազրկության բարձր կայուն մակարդակն աստիճանաբար լուրջ հիմնախնդիր է դառնում: Մինչև 2050թ. 65 կամ ավելի բարձր տարիքի Եվրոպացիների 65%-ի առկայություն կլինի, իսկ աշխատունակ տարիքի՝ /15-64տ./ 20%-ից ավելի քիչ առկայություն²⁹: Հմտությունների բարձր մակարդակ ունեցողների մեծ պահանջարկ կա: Աշխատաշուկայի մասնակիցները, ովքեր ունեն կրթության ցածր մակարդակ, կանգնելու են գործազրկության վտանգի առջև: Եթե մասնակցությունն ու ձեռքբերումները մեծացնելու համար վաղ միջամտությունն ամենաարդյունավետ մեթոդն է՝ կատարելագործելու զբաղվածության հեռանկարները, ապա անցումը կրթությունից աշխատանք համարվում է խիստ կարևոր: Փաստերը վկայում են, որ մասնագիտական կրթության և ուսուցման /ՄԿՈԻ/ լավ զարգացած համակարգերով երկրներում մասնակիցները կարող են ակնկալել հիմնավորված շահույթներ³⁰: Մասնագիտական համակարգերի փակուղիներից ազատվելը նրանց զբաղվածությունը մեծացնելու գլխավոր գործոնն է, որպեսզի ուսանողները կարողանան մուտք գործել բարձրագույն կրթություն: Անդամ պետությունները պետք է մասնագիտական կրթության միջոցով զարգացնեն ճկուն ու

²⁸ ԱԱՓ, էջ 29
²⁹ ԱԱՓ, էջ 30
³⁰ ԱԱՓ, էջ 30

հասակ ուղիներ դեպի հետագա ուսումնառություն և զբաղվածություն: Սա կօգնի ձեռք բերել հավասարություն բարձրագույն կրթությամբ և մասնագիտական որակավորումներով անձանց միջև, որն ավելի լավ է արտահայտում աշխատաշուկայի պահանջները:

25. Ելնելով ծերացող բնակչության մարտահրավերներից՝ մեծահասակների ուսումնառության ավելի լավ հնարավորությունները կարևոր են և՛ անաչառության, և՛ արդյունավետության համար: Գործատուները ձգտում են հմտությունների բարձր մակարդակ ունեցողներին ապահովել աշխատանքի վրա հիմնված ուսուցումով, որը բերում է էական շահույթներ անհատին և գործատուին³¹: Սակայն ձեռնարկությունները թերի ընդունակ, քիչ կրթված և առանցքային հմտություններ չունեցող անձանց հակված չեն ուսուցում տրամադրել:
26. Եվրոպացի մեծահասակների միայն 10.8%-ն է մասնակցում ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ցկյանս ուսումնառությանը. երկար ուղի կա՝ մինչև 2010թ. հասնելու ԵՄ 12.5% նշաձողին: Ոչ ֆորմալ ուսումնառությանը մասնակցող անձանց կրթության նախկին ձեռքբերման տվյալները ցույց են տալիս, որ որակավորումների սանդղակի ամենացածր հատվածում գտնվող մարդիկ ավելի քիչ հավանականություն ունեն՝ մասնակցելու հետագա ուսումնառությանը և, այսպիսով, կատարելագործելու իրենց զբաղվածության հեռանկարները:
27. Վերապատրաստման սոցիալական և մշակութային առավելությունները շատ կարևոր են, քանի որ դրանք ապահովում են սոցիալական ներգրավման հեռանկարով և կարող են օգնել մեծահասակներին նորից մուտք գործել ուսումնառության պարբերաշրջան: Ինչ վերաբերում է անաչառությանը, ապա գործազուրկներին և պարտադիր կրթության համակարգում հաջողության չհասած անձանց հարկավոր է պետական ֆինանսավորման ենթակա համակարգերում մուտքի հնարավորություն տալ: Սակայն թերի ընդունակ մեծահասակների զբաղվածության հեռանկարները զարգացնելու համար այս համակարգերի տվյալներն ընդհանուր առմամբ եղել են վատ³²: Երկու մոտեցում կարող են օգնել՝ կարգավորելու այս իրավիճակը:
28. Նախևառաջ, մասնագիտական և մեծահասակների ուսուցման հաջող համակարգերը հաճախ հիմնված են գործարարության, պետական հատվածի, սոցիալական գործընկերների և տեղական երրորդ հատվածի կազմակերպությունների գործընկերության վրա³³: Վերջիններս կենտրոնանում են հատուկ թիրախային խմբերի և նրանց կարիքների վրա: Ավագ միջնակարգային մակարդակում գործընկերությունները նույնպես կարող են օգնել երիտասարդներին՝ խուսափելու ներգրավված չլինելուց՝ առաջարկելով ուսումնառության

³¹ ԱԱՓ, էջ 31

³² ԱԱՓ, էջ 33-34

³³ Խորհուրդը և Հանձնաժողովը ճանաչել են սոցիալական երկխոսության կարևորությունը.
http://ec.europa.eu/comm/employment_social/social_dialogue/

այլընտրանքային միջավայր³⁴: Այս նախաձեռնություններն իրականում հստակ սահմանված ծախսեր են պահանջում, սակայն գործազրկության և հետագայում չներգրավվող անձանց մեծ թվաքանակի վրա ծախսվող գումարներն անհամեմատ ավելի մեծ են լինում³⁵:

29. Մյուս կողմից, ուսուցումը պետք է սերտորեն կապակցված լինի գործատուների հմտությունների կարիքների հետ: Այն պետք է համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին՝ գործարարություն ծավալելով ոչ միայն գործընկերությունների միջոցով, այլ նաև ընդարձակելով «գործընթացի մեջ» բաղադրիչը: Աշխատաշուկայի պահանջարկին և առաջարկին համապատասխանելու և կրթության ու կարիերայի ընտրությունները հեշտացնելու համար իշխանությունները պետք է հետագայում մշակեն աշխատաշուկայի հմտությունների կարիքների մասին տեղեկատվություն: Իշխանության աջակցությունն արդյունաբերությանը և լայնածավալ ուսուցման համակարգերին իր մեջ ունի ներուժ՝ խրախուսելու մասնավոր ներդրմանը, քանի որ ձեռնարկությունների և աշխատակիցների ծախսերը նվազեցվում են վերադիր ծախսերի միջոցով³⁶: Այս դեպքում կրճատվում է նաև կաշառակերության վտանգը: Գործատուները պետք է ներդնեն կրթության և ուսուցման մեջ՝ լինելու մրցունակ և կատարելու իրենց սոցիալական միասնական պարտականությունը՝ դառնալու «ուսումնառության կազմակերպություններ»³⁷: Աշխատաշուկայի հետ կապված ուսուցման համակարգերը միշտ եղել են առավել արդյունավետ թերի ունակ մարդկանց համար զբաղվածության հնարավորությունները մեծացնելու գործում, հատկապես այն ժամանակ, երբ դրանք կենտրոնանում են տարածաշրջանային և տեղական տնտեսության հմտությունների կարիքների վրա³⁸:

Անդամ պետությունները պետք է ստեղծեն հստակ և բազմազան ուղիներ՝ ՄԿՈՒ միջոցով խթանելու ուսումնառությունը և զբաղվածությունը: Նրանք պետք է նաև կատարելագործեն ուսուցման պետական ծրագրերը գործազուրկների և թերի ուսումնառուների համար: Այսպիսի ծրագրերի որակն ու համապատասխանությունը կարելի է մեծացնել՝ խրախուսելով շահագրգիռ կողմերի գործընկերություններին տարածաշրջանային և տեղական մակարդակներում, ինչպես նաև հեշտացնելով մասնավոր հատվածի ներգրավումը:

4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

³⁴ ԱԱՓ, էջ 34-37

³⁵ ԱԱՓ, էջ 12-14

³⁶ ԱԱՓ, էջ 34-35, 37-38

³⁷ COM(2006)136, «Աճի և Աշխատանքների Գործընկերության Իրականացում»

³⁸ ԱԱՓ, էջ 38

30. Անդամ պետություններն ունեն գլխավոր դերակատարություն՝ պայքարելու սույն զեկույցում սահմանված մարտահրավերների դեմ: Ի հավելումն նրանց ուղղված առաջարկների՝ ԵՄ մակարդակով գործողություններ ևս անհրաժեշտ են: Տնտեսական գլոբալ մրցակցությունը և սոցիալական միտումները, կախված յուրաքանչյուր երկրի իրավիճակից, ունեն միմյանց նման ազդեցություններ: Եվրոպական մոտեցումն այն է, որ կրթության և ուսուցման բազմազան համակարգերը կարող են օգուտ քաղել երկկողմ ուսումնառությունից և լավագույն փորձի փոխանակումից:
31. Ցկյանս Ուսումնառության նոր Ծրագիրը կաջակցի բազմաթիվ անհատների շարժունությանը՝ նրանց տալով նոր հմտություններ և հնարավորություն՝ դառնալու հարմարվողական Եվրոպական աշխատաշուկային: Վերագային համագործակցության միջոցով այն կամրապնդի կրթության և ուսուցման հաստատությունների որակն ու միջկապակցվածությունը: Սույն ծրագիրը կաշխատի Կառուցվածքային Հիմնադրամների հետ համատեղ գործունեությամբ, որը կաջակցի համակարգերի բարեփոխումներին և նախագծերին՝ կատարելագործելու կրթության և ուսուցման ապահովումը:
32. Լիսաբոնի վերանայված Ռազմավարության և Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի շրջանակներում ԵՄ օգնում է անդամ պետություններին նախագծել և իրագործել իրենց կրթության և ուսուցման քաղաքականությունները՝ հեշտացնելով տեղեկատվության, տվյալների ու լավագույն փորձի փոխանակումը փոխադարձ ուսումնառության և հավասար վերանայման միջոցով: Այս աշխատանքում արդյունավետությունն ու անաչառությունը կլինեն առաջնային թեմաներ, և ԵՄ կապահովի առանձնահատուկ աջակցություն՝ մշակելու գնահատման կուլտուրա և փոխանակելու նախադպրոցական կրթության լավագույն փորձը: Հանձնաժողովը մտադրություն ունի նաև ձեռնարկել աշխատանք մեծահասակների ուսումնառության, Որակավորումների Եվրոպական Շրջանակի մշակման և վիճակագրության ու ցուցիչների Եվրոպական շրջանակի վերաբերյալ: Սա կամրապնդվի ԵՄ յոթերորդ շրջանակի միջոցով ֆինանսավորված արդյունավետության և անաչառության վերաբերյալ հետազոտությամբ: